



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

20 ապրիլի 2021 թվական

6-րդ ՆՍՏԱՇՐՁԱՆԻ 3-րդ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

### ՄՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 17.20

#### Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են  
ավագանու 5 անդամ՝

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Պավել Սարգսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Սաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մերգեյ Գյոզալյան՝ Երևանի ավագանու անդամ:

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

#### Արման Անտոնյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Երկու հարց ունեմ: Մեր կողմից  
կատարվում են աշխատանքային շրջայցեր Երևան համայնքի վարչական շրջանների  
մարզադպրոցներ: Իրինա Ռոդինայի գեղասահքի մարզադպրոցում հանդիպել ենք  
երեխաների ծնողների հետ, փորձել հասկանալ, թե ինչ ընդհանուր խնդիրներ և առաջարկներ  
ունեն: Նրանց միակ առաջարկն էր, որ հնարավորություն ստեղծել ապահովելու հանրային  
ներհամայնքային տրանսպորտի հասանելիությունը մարզադպրոց: Ես հանդես եկա  
առաջարկով, որ ներհամայնքային հ.5 երթուղու ավտոբուսը, որը հասնում է Երևանի

կենտրոնական ավտոկայան և շրջադարձ է կատարում անմիջապես Ադմիրալ Իսակովի հուշարձանի հարակից խաչմերուկից, շրջադարձի վայրը տեղափոխվի 2 կմ հեռավորության վրա: Այդպես հնարավորություն կստեղծվի տրանսպորտից օգտվել մարզադպրոց հաճախող երեխաներին ու նրանց ծնողներին, հարևանությամբ տեղակայված ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսանողներին ու աշխատակիցներին, ինչպես նաև՝ ՀՀ-ում Չինաստանի նոր կառուցվող դեսպանատան աշխատակիցներին: Առաջարկիս հետ կապված պատասխան եմ ստացել, որ այդ երթուղու ավտոբուսից օգտվողների բացակայության պատճառով նպատակահարմար չեն գտնում երթուղու ուղեգիծը երկարացնել: Այս դեպքում պետք է հաշվի առնել, որ ոչ թե պահանջարկն է ստեղծում առաջարկ, այլ առաջարկն է ստեղծում պահանջարկ: Հարցս հետևյալն է. արդյոք կարո՞ղ ենք շատ մոտ ապագայում քննարկել այս հարցը, շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Սարգսյանը:

### **Հրայր Սարգսյան**

-Հարցը քննարկել ենք քաղաքապետի տեղակալ Գայանե Մելքոն Մելքոնյանի հետ: Ցանկանում եմ նշել, որ երթուղին երկարում է ոչ թե 2, այլ 4 կմ-ով, քանի որ անհրաժեշտ է նաև 2 կմ հետ գալ: Այնուամենայնիվ, այդ հարցը մեզ մոտ առկախված է, նախատեսում ենք հարցին անդրադառնալ ավտոբուսների նոր շարժակազմի Երևան ժամանելուց հետո, ինչն սպասվում է սեպտեմբեր ամսին:

### **Արման Անտոնյան**

-Շնորհակալություն, պարոն Սարգսյան: Պարոն քաղաքապետ, Ձեր թույլտվությամբ հնչեցնեմ երկրորդ հարցս: Վերջերս հերթական անգամ համոզվեցի, որ ժամանակին ինչքան հնարավոր է եղել օտարվել, վաճառվել և մասնատվել են Երևան քաղաքի բոլոր հնարավոր հանրային տարածքները, և ստեղծվում է այն համոզմունքը, որ Երևանը սիրել են ուղիղ իմաստով և հնարավորինս փորձել են ճահճացնել երևանյան մթնոլորտը: Եթե նիստի ձևաչափը թույլ է տալիս, կցանկանայի, որպեսզի Երևանի վարչական շրջանների ղեկավարները բարձրաձայնեն, թե իրենց պաշտոնավարման տարիների ընթացքում քանի՞ հանրային տարածք են վերադարձրել համայնքին և ո՞ր փուլում է գտնվում այս գործընթացը: Շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, հարցին կարող են տրվել ընդհանրական պատասխաններ, սակայն հստակ տեղեկություն ստանալու համար կարող եք դիմել գրավոր և վարչական

շրջանների ղեկավարների կողմից ստանալ բավարար տեղեկատվություն: Շատ հաճախ մենք բախվում ենք իրավական խոչընդոտների, երբ գրեթե անհնար է հաջողության հասնել: Սակայն, ընդհանուր առմամբ, բոլոր վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի կողմից տարված աշխատանքների շնորհիվ բնակիչների կողմից հինքնակամ գավթված շատ տարածքներ հետ են վերադարձվել համայնքին և բարեկարգվել են, և գործընթացը շարունակական է լինելու:

#### **Արման Անտոնյան**

-Շնորհակալություն, որ հետևողական աշխատանք եք տանում այդ ուղղությամբ:

#### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրեմ:

#### **Լևոն Զաքարյան**

-Առաջին հարցս կարմիր գծերի հետ կապված օրենսդրական նոր փոփոխություններից հետո առաջացած խնդիրների մասին է:

Նոր օրենքով սահմանված է, որ քաղաքացու պահանջով պետք է տրամադրվի խախտման վերաբերյալ 15 րոպե տևողությամբ ձայնագրությունը: Դա ինչպե՞ս է կազմակերպվում, քաղաքացին ինչպե՞ս է ստանում ձայնագրությունը: Նաև մենք գիտենք, որ վարձերի հետ կապված գնային փոփոխություն չկա, իսկ վճարման ձևերի մեջ էթե կան փոփոխություններ, ապա դա ինչպե՞ս է կազմակերպվելու: Օրինակ՝ 12000 դրամը վճարում ենք մինչև տարվա վերջ, թե հնարավորություն կա վճարել ցանկացած օր և դա ուժի մեջ կլինի մինչև հաջորդ տարվա նույն օրը:

#### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետ Արամ Աբովյանը:

#### **Արամ Աբովյան**

-«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի նոր փոփոխություններն ուժի մեջ են մտել 2021թ. փետրվարի 26-ին: Դա իրենից ենթադրում է վարչարարության առանձնահատկությունները, մասնավորապես՝ ներկայումս իրավախախտման դեպքերը բացառապես պետք է հաստատվեն 15 րոպե տևողությամբ տեսանյութի առկայության պայմաններում: Վարչական ակտն ունենում է ծածկագիր: Քաղաքացին ստանաում է կատարած իրավախախտման վերաբերյալ վարչական ակտը, ծածկագիրը նշում է քաղաքապետարանի պաշտոնական կայքի էլեկտրոնային համակարգի համապատասխան

բաժնում և ներբեռնում է **15** բույս անընդմեջ իր մեքենայի կայանված լինելու փաստն արձանագրած տեսանյութը:

Ինչ վերաբերում է վճարմանը, ապա «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի համաձայն դա կարգավորվում է Երևանի ավագանու որոշմամբ: Ավագանու որոշմամբ սահմանված է, որ տարեկան վճարումը **12000** դրամ է, որը ընթացիկ տարվա վճարումն է: Այսինքն՝ եթե վճարումը կատարվել է ապրիլ ամսին, ապա դա չի տեղափոխվում մինչև հաջորդ տարվա ապրիլ ամիսը, այլ ավարտվում է ընթացիկ տարվա դեկտեմբերի **31**-ին:

#### **Լևոն Զաքարյան**

-Շնորհակալություն:

Հաջորդ հարցս վերաբերում է Հաղթանակ թաղամասին: «Ակտիվ քաղաքացի» նախագծի շրջանակում հաղթել էր Հաղթանակ թաղամասի բոլոր փողոցներում լեդ լուսատուներ տեղադրելու առաջարկը: Թաղամասի բնակիչներն ուզում են իմանալ, թե այդ աշխատանքները ե՞րբ են կատարվելու:

#### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Դավիթ Կարապետյանը:

#### **Դավիթ Կարապետյան**

-«Ակտիվ քաղաքացի» նախագծի շրջանակներում հաղթել է երկու ծրագիր՝ Հաղթանակ թաղամասում մարզական կենտրոնի և լեդ լուսավորության համակարգի կառուցում՝ յուրաքանչյուրը **15** մլն դրամի սահմաններում: **2020**թ. տեղի ունեցած արցախյան պատերազմի պատճառով, նախատեսված բյուջեն տեղափոխվել է **2021**թ.: Համապատասխան փաստաթղթերը կազմված են և աշխատանքների կատարման համար շուտով կհայտարարվի մրցույթ:

#### **Լևոն Զաքարյան**

-Շնորհակալություն:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԻՍ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Պավել Սարգսյան, խնդրեմ:

#### **Պավել Սարգսյան**

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, հարգելի գործընկերներ, հարցս վերաբերում է բնապահպանությանը: Ներկայումս իրականացվում են ծառերի էտման աշխատանքներ, և էտված զանգվածը տվյալ վարչական շրջանի տարածքից տեղափոխվում է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տարածք: Որոշ

Ժամանակ անց այդ նույն փայտը կրկին տեղափոխվում է վարչական շրջանի տարածք՝ սոցիալապես անապահով ընտանիքներին որպես աջակցություն տրամադրելու համար: Հարցս հետևյալն է. արդյոք հնարավոր չէ և ավելի արդյունավետ չի՞ լինի ծառերի էտման արդյունքում առաջացած զանգվածը պահեստավորել վարչական շրջանի տարածքում՝ լրացուցիչ ծախսեր չանելու համար:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, պարոն Մարգսյան, այդ հարցով մեզ դիմել են վարչական շրջանների ղեկավարները, վերջիններիս ես հանձնարարել եմ հարցը քննարկել քաղաքապետի առաջին տեղակալ պարոն Մարգսյանի և «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն պարոն Աղայանի հետ: Կարծում եմ ինչ-որ լուծում գտնվել է: Հարցից, կարծում եմ, տեղյակ է բնապահպանության վարչության պետ Գևորգ Նազարյանը, խնդրեմ պարոն Նազարյան:

#### **Գևորգ Նազարյան**

-Որքանով ես տեղյակ եմ, որոշ վարչական շրջանների ղեկավարներ փայտը կուտակելու և պահպանելու համար ունեն տարածքի խնդիր: Օրինակ՝ Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջանները տնկարանին մոտ են գտնվում, ուստի նրանց համար ավելի հեշտ է փայտը կուտակել տնկարանում: Մյուս վարչական շրջաններում փայտը կուտակում են իրենց կողմից հատկացված տարածքներում, այսինքն միանշանակ չէ, որ ողջ փայտը հավաքվում է տնկարանում:

#### **Պավել Մարգսյան**

-Շնորհակալություն, երկրորդ հարցս վերաբերում է սպասվելիք **161** հատ նոր ավտոբուսներին: Խնդրում եմ մի փոքր մանրամասնեք:

#### **Հայկ Մարության**

-Այս շաբաթ սպասում ենք պայմանագրի ստորագրմանը: Մենք շատ օրենսդրական խոչընդոտներ ենք հաղթահարել դրան հասնելու համար: Խոսքը վերաբերում է **161** հատ, **8,6** մետրանոց, ցածր հատակով, բոլոր չափանիշներին համապատասխանող, լավ որակի ավտոբուսներին, որոնք կմատակարարվեն պայմանագիրն ստորագրելուց հետո **6** ամսվա ընթացքում: Դրանով քաղաքում մեծ հարց կլուծվի: Մենք կարող ենք նույնիսկ **15** և ավել տարիներ շահագործվող միկրոավտոբուսները փոխարինել նոր ավտոբուսներով: Երբ պայմանագիրն ստորագրենք, դրա վերաբերյալ հատուկ հայտարարություն կանենք, որպեսզի մեր բնակիչները տեղեկացված լինեն, շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյան:

### **Սաթենիկ Մկրտչյան**

-Շնորհակալություն, երկու հարց ունեմ, առաջին հարցս հնչեցնեմ: Գիտենք, որ բյուջետային առումով այս տարի դժվար տարի է, տարբեր ոլորտներով ստիպված ենք լինելու կրճատումներ անել, որը պայմանավորված է ոչ միայն ՀՀ կառավարության կողմից համայնքին հատկացվելիք բյուջեի կրճատմամբ, այլև հետպատերազմական իրավիճակի ծախսերով և քիչ եկամուտներով:

Հարցս հետևյալն է. արդյոք կա մշակված քաղաքականություն և առաջնահերթություն այդ կրճատումների հետ կապված: Տրամադրվում է արդյոք տեղեկատվություն այդ կրճատումների վերաբերյալ, այն մարդկանց, ում վրա ազդելու է կրճատումը, որպեսզի իրենք նույնպես հասկանան խնդիրը և վստահ լինեն, որ այլ տարբերակ չկա: Գտնվել է արդյոք ինչ-որ լուծում ծախսերի տեսակավորման հարցում: Ըստ էության, առաջնահերթ անհրաժեշտ է կրճատել, այսպես կոչված, «ճոխության ծախսերը» կամ այն ծախսերը, որոնք հնարավոր է կատարել հասարակական սեկտոր-մասնավոր համագործակցությամբ, որպեսզի այդ ծախսերը համայնքի բյուջեի միջոցների հաշվին չիրականացվի:

Արդյոք նախատեսել էք հստակ ուղղություն, որպեսզի կրճատումները չլինեն մարդկանց աշխատավարձերի կամ պարգևավճարների հաշվին, որը բոլորս գիտենք որոշակիորեն ապահովում է եկամուտի կայուն նվազագույն զանգված: Ունենք արդյոք, այսպես կոչված, այդ «կարմիր գիծը», որ պետք է փորձել կրճատումներ անել՝ առավելագույնս չվնասելով աշխատողների եկամուտները: Ցանկանում էի հասկանալ, կրճատումների վերաբերյալ նման հայեցակարգային քննարկումներ ունեցե՞լ էք և արդյոք կան լուծումներ:

### **Հայկ Մարության**

-Տիկին Մկրտչյան, հարցին կարող եմ պատասխանել Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը, ով այս պահին, իմ հանձնարարությամբ, բացակայում է դահլիճից: Խնդրում եմ հնչեցրեք Ձեր երկրորդ հարցը, այնուհետև կանդրադառնանք առաջին հարցին:

### **Սաթենիկ Մկրտչյան**

-Երկրորդ հարցս ավելի շատ քաղաքացիներին հուզող հարց է, որը վերաբերում է Շենգավիթ վարչական շրջանում գտնվող «Հայրենիք» կինոթատրոնի կտրված սյան վերկանգնման աշխատանքներին: Հանրությունն իրականում սիմվոլիկ մեկնաբանություններ է անում այդ հարցի վերաբերյալ: Ցանկանում եմ տեղեկանալ ի՞նչ փուլում է սյան վերականգնման աշխատանքները:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար Ռազմիկ Մկրտչյանը, խնդրեմ:

### **Ռազմիկ Մկրտչյան**

-Տիկին Մկրտչյան, այսօր խոսել եմ կինոթատրոնի սեփականատիրոջ հետ, այս պահին մասնագետների և կոնստրուկտորների հետ այնտեղ են, անգամ ինձ էին հրավիրում, որ տեղում հասկանանք ինչ է հնարավոր իրականացնել: Կարծում եմ այսօր կոտրված սյունը կհանեն այդտեղից, այնուհետև կդիմեն քաղաքապետարան և, օրենքով սահմանված կարգով, կվերականգնվի նախկին տեսքի: Այս պահին խորհրդակցում էին արդյոք հնարավոր է նախկին տեսքի բերել, որովհետև կոնստրուկցիայի խնդիր կա: Նախկինում մետաղական հիմք չի եղել, պարզապես սիմվոլիկ սյուն է եղել: Հաշվի առնելով, որ ցնցում է եղել, կարծում եմ, անհրաժեշտ է մետաղական ամուր հիմքերով այն վերականգնել: Մասնագետները, կարծում եմ, ճիշտ խորհուրդ կտան և սեփականատերը կդիմի քաղաքապետարան:

Կինոթատրոնի հարակից տարածքի ստորգետնյա անցումի մասով կարող եմ ասել, որ քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից վերանորոգման աշխատանքներն արդեն ավարտական փուլում են:

### **Հայկ Մարության**

-Տիկին Մկրտչյան, ցանկանում եմ նաև տեղեկացնել, որ կինոթատրոնի սեփականատերը ցանկանում էր շենքի արտաքին տեսքի փոփոխություններ իրականացնել: Դիմել էր քաղաքապետարան, որպեսզի հարցի վերաբերյալ դիրքորոշում ստանար: Ճարտարապետներն ուսումնասիրել են և բացասական եզրակացություն են տվել, որոշվել էր վերականգնել նախկին տեսքը: Դա գործընթաց էր, որը պետք է ուսումնասիրվեր և հիմնավոր պատասխան տրվեր, այդ պատճառով հարցի լուծման համար մի փոքր երկար ժամանակ պահանջվեց:

### **Սաթենիկ Մկրտչյան**

-Որպես արձագանք ասեմ, որ նման հարցերը շատ են, երբ հանրությունը, ես նույնպես կլինեի նրանց մի մասը, եթե ավագանու անդամ չլինեի, հարցերի պատասխանը շատ արագ է ցանկանում ստանալ և, ըստ էության, հետևում առկա այդ հարցերը նրանց տեսանելի չեն լինում: Ինձ թվում է, նման դեպքերում անհրաժեշտ է մի քիչ շատ խոսել խնդրի մասին: Դա երբեմն վերածվում է բողոքի, պարզապես պետք է նկարագրել ընթացքը և ցույց տալ մարդկանց, որ աշխատանքներն իրականացվում են ըստ կարգի:

### **Հայկ Մարության**

-Տիկին Մկրտչյան, նշեմ, որ այս հարցում և՛ սեփականատերն է ճիշտ դիրքորոշում հայտնել, և՛ վարչական շրջանի ղեկավարն է ճիշտ աշխատել: Եթե դիտարկենք իրավական դաշտում՝ սեփականատերը կարող էր աշխատանքն ուշ իրականացնել կամ չիրականացնել՝ ասել, որ միջոցներ չունի: Այդ դեպքում ստիպված կլինեինք դատական կարգով հարցին լուծում տալ: Այս դեպքում հարցին հնարավորինս արագ է լուծում տրվել: Գործընթացը ժամանակատար է եղել, քանի որ սեփականատերը դիմել էր քաղաքապետարան, որպեսզի արտաքին տեսքի փոփոխություններ իրականացնեն: Քննարկման արդյունքում եկել ենք ընդհանուր հայտարարի, որ վերականգնվի շենքի նախկին տեսքը:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սերգեյ Գյոզալյան, խնդրեմ:

### **Սերգեյ Գյոզալյան**

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է տրանսպորտին: Որքանով ես գիտեմ որոշ ժամանակ առաջ գծվել է Երևան քաղաքի տրանսպորտային պլանը: Այս ընթացքում քաղաքում ծավալուն շինարարություն է ընթանում, գոյանում են նոր բնակելի համալիրներ: Որքանով է հին տրանսպորտային պլանը համապատասխանում քաղաքի նոր տեսքին, արդյոք նախատեսվում է այդ նոր բնակելի համալիրներում ևս անցկացնել տրանսպորտային երթուղիներ: Շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, ճիշտ հարց էք տալիս: Այո, այս պահին փոքր փոփոխություններ եղել են: Մենք շարունակելու ենք այդպիսի փոքր փոփոխություններով հասնել նրան, որ այդ նոր թաղամասերը նույնպես միանան ընդհանուր տրանսպորտային ցանցին:

### **Սերգեյ Գյոզալյան**

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, երկրորդ հարցս հետևյալն է. ավագանու որոշմամբ փոփոխված հողերի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերականից դարձնելով բնակելի, տրվում են շինթույլտվություններ: Ես, իհարկե, կողմ եմ շինարարական ոլորտի զարգացմանը, բայց ունեմ մտահոգություններ այս առումով: Քաղաքաշինությունն իր մեջ ներառում է ոչ միայն ճարտարապետական և շինարարական, այլ նաև մակրոտնտեսական, միկրոտնտեսական, դեմոգրաֆիկ և սոցիոլոգիական խնդիրներ: Արդյոք շինթույլտվություններ տալուց որևէ կերպ հաշվարկվում է, թե այդ շինարարության ավարտի ժամանակ որքան է լինելու բնակարանների վճարունակ պահանջարկը, կամ կարո՞ղ է լինել այնպես, որ հետագայում բնակարանների գները շեշտակի իջնեն, և գյուղական ու սահմանամերձ բնակավայրերից բնակչությունը տեղափոխվի Երևան, դրանով իսկ



առաջացնելով դեմոգրաֆիկ շեղումներ: Արդյոք հնարավոր է շինթույլտվություններ տրամադրելու գործընթացը ժամանակավորապես կասեցնենք, ձևավորենք Երևան քաղաքի շինարարական զարգացման ծրագիրը (գենպլանը), այնուհետև շարունակենք, շնորհակալություն:

**Հայկ Մարության**

-Շնորհակալություն, շինթույլտվություններ տրամադրելու գործընթացը կասեցնել հնարավոր չէ: Հարցի մյուս մասին կանդիդատնա քաղաքապետի խորհրդական Դավիթ Ճգնավորյանը, խնդրեմ:

**Դավիթ Ճգնավորյան**

-Շինթույլտվությունների հետ կապված ասեմ, որ հողային օրենսգիրքը շատ կետերով հակասում է Երևան քաղաքի գլխավոր հատակագծին, իսկ վերջինս էլ ինչ-ինչ պատճառներով տարանջատվել է և հակասություններ ունի գոտիավորման նախագծի հետ: Մենք ձևավորել ենք մասնագիտական խմբեր, պատասխանատվություն եմ ստանձնում հայտարարել, որ մոտակա մեկուկես տարվա ընթացքում որոշակի փոխհամաձայնությունների միջոցով, ռիսկերը հնարավորինս նվազեցնելով՝ կարողանանք անցնել այս դժվար անցումային փուլը և օր առաջ արդիականացնենք, համակարգենք բոլոր օրենքներն ու քաղաքաշինական կարևորագույն փաստաթղթերը համապատասխանեցնենք իրականությանը, շնորհակալություն:

**Հայկ Մարության**

-Շնորհակալություն, ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 3-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝ Ա. Եփրիկյան